ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/09»

ք. Երևան «13» օգոստոսի 2018թ.

ՀՀ դատական դեպարտամենտն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է ՀՀ դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԵԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Սեփոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հսկողության համակարգերի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4 199 400 (չորս միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ դատական դեպարտամենտ	***«ՍԵԳ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1510037072220100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00878823
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Տնօրեն՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ [illegible]հոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	

Հավելված N 1
« 13 » օգոստոսի 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/09» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը		մատուցման միավորի գինը /ՀՀ դրամ/	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
		բնութագիրը	Առավելագույն քանակը					հասցեն	ժամկետը*
1	79711140/2	***Անվտանգության տեսախցիկների վերանորոգման ծառայություններ***			դրամ	1 496 400	1	ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5, Գ. Նժդեհի 23, Թբիլիսյան խճուղի 3/9, Տիգրան Մեծի 23/1, Գյուլիքևխվյան 20, Արշակունյաց պողոտա 24/1, Մովսես Խորենացի 162ա, Հրաչյա Ներսիսյան 10, Օտյան փողոց 53/2, Նազարբեկյան թաղամաս 40, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փող., 1/1, ք. Չարենցավան, Երիտասարդական 2/1, ք. Եղվարդ, Չարենցի 29, ք. Աբովյան, Կոտայքի 8, ք. Արտաշատ, Շահումյան 19, ք. Մասիս, 3-րդ թաղամաս, Հերացու փողոց 26/31, ք. Վեդի, Մ.Խաչատրյան 1, ք. Եղեգնաձոր, Միկոյան 23, ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8, ք. Արմավիր, Հանրապետության 41, ք. Էջմիածին, Կամոյի 15, ք. Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65, ք. Ապարան, Գայի 25, ք. Թալին, Խանջյան 13, ք. Իջևան, Նալբանդյան 1/1, ք. Դիլիջան, Շահումյան 15, ք. Նոյեմբերյան, Կամոյի 2, ք. Բերդ, Այգեստան 49ա, ք. Գավառ, Սայադյան 18, ք. Սևան, Աբովյան 6/1, ք. Մարտունի, Շահումյան 5, ք. Վարդենիս, Ազգալդյան 2, ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 99/1, ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6, ք. Ալավերդի, Թումանյան 1, ք. Տաշիր, Ջահուկյան 19, ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 2/10, ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 53, ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2, ք. Գորիս, Անկախության 4/1, ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 6, ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 24/1, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7, ք. Արթիկ, Բաղրամյան 40, ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198, գյուղ Աշոցք, կենտրոնական հրապարակ:	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ:
		Ներքին տեսախցիկի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ բոլոր պահեստամասերը:	10	1 000					
		Ներքին տեսախցիկի փոխարինում ներառյալ տեսախցիկը՝ առնվազն 1/3" 1.3Mega HDIS կամ համարժեք, տեսաապակի՝ 2.8 մմ-12 մմ, պիքսելների քանակը՝ 1280(H)X960(V), տեսանկարահանում՝ ցերեկ/գիշեր:	6	30 000					
		Արտաքին տեսախցիկի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ բոլոր պահեստամասերը:	10	1 200					
		Արտաքին տեսախցիկի փոխարինում ներառյալ տեսախցիկը՝ առնվազն 1/3" 1.3Mega HDIS կամ համարժեք, տեսաապակի՝ առնվազն 2.8մմ-12մմ, պիքսելների քանակը՝ առնվազն 1280(H)×960(V), տեսանկարահանում՝ ցերեկ/գիշեր, ջրադիմացկուն և կայծակի հարվածների պաշտպանվածություն:	6	35 000					
		Տեսաձայնագրիչի (DVR) վերանորոգում ներառյալ անհրաժեշտ բոլոր պահեստամասերը:	8	5 800					
		Տեսաձայնագրիչի (DVR) փոխարինում ներառյալ տեսաձայնագրիչը (առնվազն 4 վիդեո մուտք (channel) և երեք վիդեո ելք (channel) HDMI/VGA/TV, առնվազն չորս աուդիո մուտք և մեկ աուդիո ելք, ձայնագրման առնվազն 4TB հիշողության հնարավորությամբ, Windows , Mac, անդրոիդ կամ համարժեք ծրագրային	3	45 000					

		ապահովումներով, վիդեոպատի և ուղիղ միացման (online view) հնարավորությամբ:							
		Տեսաձայնագրիչի (DVR) փոխարինում ներառյալ տեսաձայնագրիչը (առնվազն 8 վիդեո մուտք (channel) և երեք վիդեո ելք (channel) HDMI/VGA/TV, առնվազն չորս աուդիո մուտք և մեկ աուդիո ելք, ձայնագրման առնվազն 4TB հիշողության հնարավորությամբ, Windows , Mac, անդրոիդ կամ համարժեք ծրագրային ապահովումներով, վիդեոպատի և ուղիղ միացման (online view) հնարավորությամբ:	3	70 000					
		Տեսաձայնագրիչի (DVR) փոխարինում ներառյալ տեսաձայնագրիչը (առնվազն 16 վիդեո մուտք (channel) և երեք վիդեո ելք (channel) HDMI/VGA/TV, առնվազն չորս աուդիո մուտք և մեկ աուդիո ելք, ձայնագրման առնվազն 4TB հիշողության հնարավորությամբ, Windows , Mac, անդրոիդ կամ համարժեք ծրագրային ապահովումներով, վիդեոպատի և ուղիղ միացման (online view) հնարավորությամբ:	3	98 000					
		Տեսախցիկների սնուցման բլոկի վերանորոգում	8	6 000					
		Տեսախցիկների սնուցման բլոկի փոխարինում 12V/10A	3	1 000					
		Տեսախցիկների սնուցման բլոկի փոխարինում 12V/15A	3	8 000					
		Տեսախցիկների սնուցման բլոկի փոխարինում 12V/30A	3	25 000					
		Տեսաձայնագրիչի սնուցման բլոկի վերանորոգում	9	7 000					
		Տեսաձայնագրիչի սնուցման բլոկի փոխարինում 12V/10A	3	10 000					
		Տեսաձայնագրիչի սնուցման բլոկի փոխարինում 12V/15A	3	1 000					
		Տեսաձայնագրիչի սնուցման բլոկի փոխարինում 12V/30A	3	1 000					
		Մալուխի և կցորդիչի փոխարինում, ներառյալ 1 մ մալուխը (cctv 4+1 կամ համարժեք) և համապատասխան կցորդիչ (BNC կամ համարժեք)	500	300					
2	79711140/3	***Անվտանգության դարպասների վերանորոգման ծառայություններ***			դրամ	1 263 000	1	ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5, Գ. Նժդեհի 23, Թբիլիսյան խճուղի 3/9, Տիգրան Մեծի 23/1, Գյուլիքևխվյան 20, Արշակունյաց պողոտա 24/1, Մովսես Խորենացի	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

		Ավտոմատ կառավարման դարպասի շարժաբերի վերանորոգում, ներառյալ անհրաժեշտ բոլոր պահեստամասերը:	3	65 000				162ա, Հրաչյա Ներսիսյան 10, Օտյան փողոց 53/2, Նազարբեկյան թաղամաս 40, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փող., 1/1, ք. Չարենցավան, Երիտասարդական 2/1, ք. Եղվարդ, Չարենցի 29, ք. Աբովյան, Կոտայքի 8, ք. Արտաշատ, Շահումյան 19, ք. Մասիս, 3-րդ թաղամաս, Հերացու փողոց 26/31, ք. Վեդի, Մ.Խաչատրյան 1, ք. Եղեգնաձոր, Միկոյան 23, ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8, ք. Արմավիր, Հանրապետության 41, ք. Էջմիածին, Կամոյի 15, ք. Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65, ք. Ապարան, Գայի 25, ք. Թալին, Խանջյան 13, ք. Իջևան, Նալբանդյան 1/1, ք. Դիլիջան, Շահումյան 15, ք. Նոյեմբերյան, Կամոյի 2, ք. Բերդ, Այգեստան 49ա, ք. Գավառ, Սայադյան 18, ք. Սևան, Աբովյան 6/1, ք. Մարտունի, Շահումյան 5, ք. Վարդենիս, Ազգալդյան 2, ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 99/1, ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6, ք. Ալավերդի, Թումանյան 1, ք. Տաշիր, Ջահուկյան 19, ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 2/10, ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 53, ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2, ք. Գորիս, Անկախության 4/1, ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 6, ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 24/1, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7, ք. Արթիկ, Բաղրամյան 40, ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198, գյուղ Աշոցք, կենտրոնական հրապարակ:	2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ:
		Ավտոմատ կառավարման դարպասի շարժաբերի փոխարինում, ներառյալ շարժաբերը (կոմպլեկտ):	2	330 000					
		Հեռակառավարման համակարգի վերանորոգում, ներառյալ անհրաժեշտ բոլոր պահեստամասերը:	3	15 000					
		Հեռակառավարման համակարգի փոխարինում, ներառյալ հեռակառավարման համակարգը(կոմպլեկտ):	2	150 000					
		Հեռակառավարման վահանակի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ բոլոր պահեստամասերը:	3	1 000					
		Հեռակառավարման վահանակի փոխարինում ներառյալ հեռակառավարման վահանակը:	2	20 000					
		Ուղեփակոցի ձողի փոխարինում, ներառյալ ուղեփակոցը/2մ-3.5մ/:	1	20 000					
3	79711140/4	***Դռների անվտանգության էլեկտրամագնիսական փականների վերանորոգման ծառայություններ***			դրամ	1 440 000	1	ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5, Գ. Նժդեհի 23, Թբիլիսյան խճուղի 3/9, Տիգրան Մեծի 23/1, Գյուլիքևխվյան 20, Արշակունյաց պողոտա 24/1, Մովսես Խորենացի 162ա, Հրաչյա Ներսիսյան 10, Օտյան փողոց 53/2, Նազարբեկյան թաղամաս 40, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փող., 1/1, ք. Չարենցավան, Երիտասարդական 2/1, ք. Եղվարդ, Չարենցի 29, ք. Աբովյան, Կոտայքի 8, ք. Արտաշատ, Շահումյան 19, ք. Մասիս, 3-րդ թաղամաս, Հերացու փողոց 26/31, ք. Վեդի, Մ.Խաչատրյան 1, ք. Եղեգնաձոր, Միկոյան 23, ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8, ք. Արմավիր, Հանրապետության 41, ք. Էջմիածին, Կամոյի 15, ք. Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65, ք. Ապարան, Գայի 25, ք. Թալին, Խանջյան 13, ք. Իջևան, Նալբանդյան 1/1, ք. Դիլիջան, Շահումյան 15, ք. Նոյեմբերյան, Կամոյի 2, ք. Բերդ, Այգեստան 49ա, ք. Գավառ, Սայադյան 18, ք. Սևան, Աբովյան 6/1, ք. Մարտունի, Շահումյան 5, ք. Վարդենիս, Ազգալդյան 2, ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 99/1, ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6, ք. Ալավերդի, Թումանյան 1, ք. Տաշիր, Ջահուկյան 19, ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 2/10, ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 53, ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2, ք. Գորիս, Անկախության 4/1,	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ:
		Դռների անվտանգության էլեկտրամագնիսական փականի վերանորոգում, ներառյալ անհրաժեշտ բոլոր պահեստամասերը:	20	9 000					
		Դռների անվտանգության էլեկտրամագնիսական փականի փոխարինում, ներառյալ փականը:	15	33 000					
		Ղեկավարման բլոկի վերանորոգում, ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը:	20	9 000					
		Ղեկավարման բլոկի փոխարնում, ներառյալ ղեկավարման բլոկը	10	32 000					
		Քարտ կարդացող սարքի փոխարինում ներառյալ քարտ կարդացող սարքը:	10	26 500					

								ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 6, ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 24/1, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7, ք. Արթիկ, Բաղրամյան 40, ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198, գյուղ Աշոցք, կենտրոնական հրապարակ:	

Կատարողը սեփական միջոցների հաշվին իրականացնում է սպասարկման կարիք ունեցող սարքերի, սարքավորումների տեղափոխումը և հետ վերադարձը վերը նշված հասցեներից սպասարկման կենտրոններ:

Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:

Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը Պատվիրատուի պահանջի դեպքում մեկ օրվա ընթացքում ներկայանում է Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:

Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրվանից հաշված առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵԳ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18
Հ/Հ՝ 1510037072220100
ՀՎՀՀ՝ 00878823
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ [illegible]

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » օգոստոսի 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/09» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79711140/2	Անվտանգության տեսախցիկների վերանորոգման ծառայություններ	897 840	897 840	1 496 400	1 496 400	1 496 400	**1 496 400**
2	79711140/3	Անվտանգության դարպասների վերանորոգման ծառայություններ	757 800	757 800	1 263 000	1 263 000	1 263 000	**1 263 000**
3	79711140/4	Դռների անվտանգության էլեկտրամագնիսական փականների վերանորոգման ծառայություններ	864 000	864 000	1 440 000	1 440 000	1 440 000	**1 440 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Տնօրեն՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

M.P.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵԳ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18
Հ/Հ՝ 1510037072220100
ՀՎՀՀ՝ 00878823
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Լ. Մ[illegible]

(ստորագրություն)

Հավելված 3
« 13 » օգոստոսի 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/09» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 13 » օգոստոսի 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/09» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն